Զորավար Անդրանիկի ծննդյան
150-ամյակի առթիվ

ԱՆԴՐԱՆԻԿ. ԾԱՆՈԹ ԵՎ ԱՆԾԱՆՈԹ ՀԵՐՈՍԱՊԵՏԸ

ԿԱՐՈ ՎԱՐԴԱՆՅԱՆ

«Ու երբ Ակնունին, կոնկրեյի[1] նախագահ, անոր
քովը սողացեր է, ինչպես օձը Եվային, անոր
ըսելու համար, թե դուք Աստվածը պիտի
մնաք կուսակցությանը, Անդրանիկ՝ նախամայրեն
ավելի տոկուն, պատասխանած է՝
– Ավելի աղեկ է որ ես դուրսը մարդ մնամ,
քան թե ձեր մեջ Աստված»[2]:

Ավետիս Թերզիբաշյան

Ռուս ռազմական պատմաբան Ալեքսեյ Շիշովը երկար տարիների ուսումնասիրությունների արդյունքում 2005 թ. լույս ընծայեց հանրագիտարանային բնույթի մի աշխատություն՝ «100 մեծ հերոսները»[3]: Գրքում տեղ են գտել մարդկությանը քաջ հայտնի 100 առավել երևելի անուններ, որոնց գործունեությունը բախտորոշ է եղել ոչ միայն սեփական ժողովուրդների, այլև համաշխարհային պատմության կարևորագույն իրադարձությունների համար: Ընդգրկված ժամանակաշրջանն անսահմանափակ է՝ անտիկ ժամանակներից մինչև XX դարի սկիզբը (նորագույն ժամանակաշրջանը ներկայացնող անվանի ռազմական գործիչների իրական տեղն ու դերը գնահատելու համար պատմագրությանը դեռ տասնամյակներ են անհրաժեշտ):

Յավոք, հայկական այլևայլ շրջանակներն այդպես էլ անհաղորդ մնացին այս ուշագրավ աշխատությանը, այնինչ պետք է առաջինն արձագանքողներից լինեինք, պատվավոր տեղ տայինք այս գրքին մեր գրադարաններում, գրախանութներում, մասնավորապես՝ ռազմահայրենասիրական ուղղվա-

---

[1] *Խոսքը ՀՅԴ Վիեննայի 1907 թ. կոնգրեսի մասին է:*
[2] *Ա վ. Թ ե ր զ ի բ ա շ յ ա ն. Անդրանիկ, Փարիզ, 1942, էջ 106–107:*
[3] А. Ш и ш о в. 100 великих героев. М., 2005, с. 470–472.

ծության կրթական հաստատություններում: Հենց միայն նրա համար, որ թերթելով գրքի էջերը, մարդկության պատմությունը կերտած ամենահզորների՝ Աքիլլեսի, Ալեքսանդր Մակեդոնացու, Հաննիբալի, Հուլիոս Կեսարի, Սպարտակի, Աթիլլայի, Ուիլյամ Ուոլոսի, Ժաննա դ'Արկի, Վաշինգթոնի, Նապոլեոն Բոնապարտի, Լակշմի Բայի, Կուտուզովի, Սուվորովի, Գարիբալդիի և այլոց կողքին տեսնում ենք բոլոր ժամանակների մեր մեծագույն հերոսին՝ Զորավար Անդրանիկին:

Ա. Շիշովը հիմնականում ճշգրիտ է ներկայացնում Անդրանիկի 30-ամյա մարտական հագեցած ուղին՝ շեշտադրելով հատկապես Բուլղարական ու Կովկասյան ճակատներում նրա ունեցած դերակատարությունը՝ օգտվելով Կովկասյան ճակատի պատասխանատու գեներալների (Ն. Յուդենիչ[4], Ա. Միշլայևսկի, Ֆ. Չերնոզուբով, Ի. Տրուխին, Թ. Նազարբեկով և այլն) և այլոց հիացական վկայություններից, հոդվածներից, զինվորական զեկուցագրերից, որոնցով, բարեբախտաբար, հագեցած է ժամանակի ռուս մամուլը:

Քանի որ հերոսները ներկայացված են ըստ ժամանակագրական կարգի, Շիշովի ցանկում Անդրանիկը 99-րդն է: Իսկ Անդրանիկին հաջորդում և ցանկը եզրափակում է… Մուստաֆա Քեմալը (Աթաթուրք):

Այն, որ Քեմալն իր ցեղի հերոսն է, որ Առաջին աշխարհամարտի արդյունքում գլխովին ջախջախված և քարտեզից վերանալու դատապարտված իր երկրից կարողացավ ստեղծել ժամանակակից աշխարհի ամենահզոր պետություններից մեկը, վիճարկման ենթակա չէ: Սակայն դրա համար չէ, որ հիշատակում ենք նրան: Եվ ոչ էլ նրա համար, որ տեղ է գտել մեր դյուցազունի կողքին: Այլ այն պատճառով, որ Անդրանիկին նվիրված հազարավոր մեծ ու փոքր գնահատականներից ամենադիպուկն ու իրատեսականը, թերևս, պատկանում է հենց Քեմալին:

Վկայողն անվանի լեզվաբան, թուրքագետ Հակոբ Մարթայանն է (Դիլաչար), ով լատինատառ դարձրեց թուրքերեն այբուբենը, և այդ լեզվում կատարված նշանակալի բարեփոխումների հեղինակ է[5]: 1934 թ. օգոստոսի 31-ին Աթաթուրքը խնջույք էր կազմակերպել՝ ի պատիվ այդ օրերին Թուրքիայում ընթացող լեզվաբանության միջազգային գիտաժողովին մասնակից օտարազգի լեզվաբանների: Երեկոն հետաքրքիր դարձնելու համար նա առաջարկում է հյուրերին իրենց մայրենի լեզուներով մեկական երգ երգել: Վերջում, նկատելով, որ Մարթայանը ողջ երեկոյի ընթացքում անտրամադիր է (տխուր էր, որովհետև այդ օրը Զորավարի մահվան օրն էր), առաջարկում է, որ մի երգ էլ նա երգի: Մարթայանը ոտքի է կանգնում և, գիտակցելով իր արածի հնարավոր աղետալի հետևանքները, սկսում է ինքնամոռաց երգել գուսան Շերամի հայտնի երգը.

---

[4] *Ի դեպ, Կովկասյան ճակատի զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ-լեյտենանտ Նիկոլայ Յուդենիչը, ով Անդրանիկին որակում էր «խենթի պես քաջ», Ա. Շիշովի նախասիրած թեմաներից է (տե՛ս* А. Ш и ш о в. 100 великих героев. М., 2009, с. 471*): Ծավալուն աշխատություն է նվիրել ռուս գեներալի գործունեությանը (տե՛ս* А. Ш и ш о в. Юденич. Генерал суворовской школы. М., 2005).

[5] *Մուստաֆա Քեմալին Հ. Մարթայանն է կոչել «Աթաթուրք» (թուրքերի հայր), վերջինս էլ Մարթայանին անվանել է «Դիլաչար» (լեզու բացող):*

Իբրև արծիվ սավառնում ես լեռ ու ժայռ,
Թնդացնում ես երկինք, երկիր տենչավառ,
Սուրբ անունդ պիտի հիշվի դարեդար,
Հսկա լերինք քեզ ապաստան, Անդրանիկ…

Խնջույքին ներկա թուրք մեծամեծները անթաքույց կատաղությամբ սպասում են Աթաթուրքի արձագանքին: Նա համբերատար մինչև վերջ լսում է երգը և ասում. «Անդրանիկը մեր կատաղի թշնամին էր: Անոր սուրեն հազարավոր թուրքեր ինկան: Այդ տեսակ հերոս հայերը անցյալին չեն ունեցած, ներկայիս չկա և ապագային ալ չի սպասվիր»[6]: Շարունակությունը հետաքրքիր չէ: Շարունակությունը Մարթայանին ուղղված սպառնալիք է, որ Թուրքիայում այդ ատելի անունը այլևս չպետք է հնչի:

Պետք է նկատենք, որ իր այս խոսքերով Քեմալն արտահայտում էր ողջ թուրք հանրության մտայնությունը: Թուրքը մեր շարքերում իրեն արժանի միայն մի թշնամի է ճանաչել՝ Զորավար Անդրանիկին կամ, ինչպես ինքն էր կոչում՝ Անդրանիկ փաշային: Մեր մյուս հերոսներին նա ճանաչել է մեկ շաբաթ, մեկ ամիս, մեկ տարի… այնքան ժամանակ, մինչև կարողացել է հաղթել նրանց, հալածել կամ սպանել, որից հետո մոռացության է մատնել: Անդրանիկը թուրքի համար այդպես էլ մնաց անպարտելի, մնաց որպես մշտնջենական մղձավանջ ու պատուհասող վրիժառու: Թերևս ոչ մի ազգային տոն թուրքին այնքան բերկրանք ու խանդավառություն չի պատճառել, որքան Անդրանիկի մահվան լուրը: Համենայն դեպս ժամանակի թուրք մամուլը շատ պերճախոս է այն երկարատև անասնական ցնծության մասին, որ Թուրքիայում ծայր առավ այդ լուրից: Բերենք մի հատված Ստամբուլի «Սոն Սաաթ» թերթի այդ օրերի մի հրապարակումից, որը թարգմանաբար լույս է ընծայել Ֆրեզնոյի «Մշակ» շաբաթաթերթը. «ԱՅՍ ՀՈՂԵՐՈՒՆ ՎՐԱՅ ԱՅԼԵՎՍ ՈՉ ՄԵԿ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԻՏԻ ԾՆԻ. Այս խորագիրներուն տակ, երեկվան Սոն Սաաթ կը գրե.– «Անդրանիկ մեռեր է. Մեր թերթը այս առթիվ «հոգին դժո՛խք» գրած էր երեկ. Իր մահեն հետո արտասանված այս աղոթքն անգամ բավական չէ բացատրելու համար այն գեշությունները, զորս թուրք ազգին հասցուցած է Անդրանիկ: …Այլևս մայր հայրենիքը ոչ մեկ Անդրանիկի երազ պիտի սնուցանե: Այլևս այս հողերուն վրա ոչ մեկ Անդրանիկ պիտի ծնի. Եթե ծնի՝ չպիտի մեծնա, եթե մեծնա՝ լեռը չպիտի ելլե, եթե լեռը ելլե՝ չպիտի կրնա սուրը քաշել, եթե քաշե՝ իր կուրծքը մխելով անձնասպան ըլլալու համար միայն պիտի քաշե:

Այս հողերուն վրա ապրող բոլոր հայրենակիցները միակ մեծ երազ մը պիտի ունենան.– Հավիտենական Թուրքիա»»[7]:

Ինչ աստիճանի էր մեր դյուցազնը դաղել արյունռուշտ գազանին՝ նման բարբարոս ատելության արժանանալու համար:

Թե ինչպիսի զարհուրանք էր հարուցում Անդրանիկի սոսկ անունը թուրքերի և թաթար-ազերիների մեջ, վկայված է նաև գեներալ Գաբրիել Կորգանովի (Ղորղանյան) մի հուշում: 1918 թ. սկզբներին թաթարական հրոսակախումբը

---

[6] *«Տեղեկատու» (Կահիրե), հունվար, 2013, - 66, էջ 5:*

[7] *«Մշակ» (Ֆրեզնո), 4. X. 1927:*

Ախթալա կայարանում գրավում է գնացքը, կոտորում բոլոր հայ ուղևորներին և գերի վերցնում Կորգանովին: Թաթարները ցնծության մեջ էին, գերու գեներալական ուսադիրների պատճառով իրենք իրենց ներշնչել էին, թե բռնել են Անդրանիկ փաշին: Իգուր են անցնում Կորգանովի բացատրությունները, թե ինքը չի կարող Անդրանիկը լինել, թե ինքը շեկ է, Անդրանիկը՝ թուխ, թե ինքը ռուսախոս է, իսկ Անդրանիկը ռուսերեն չի խոսում: Թաթարները որոշում են, որ դրանով թանկագին գերին փորձում է իր կաշին փրկել և… «Ամենայն լրջությամբ՝ թաթարները անոր կպատասխանեն, թե Անդրանիկ կրնա երևիլ ամեն կերպարանքով – ծեր, երիտասարդ, շեկ, թուխ. թե Անդրանիկ կրնա խոսիլ ուզած լեզվով, քանի որ ան դև է»[8]:

Մի բանում թշնամին ճիշտ էր. մենք երկրորդ Անդրանիկ այլևս չունեցանք: Նրանից առաջ էլ այդպիսին չենք ունեցել:

Հազարամյակների մեր պատմության տարբեր հանգրվաններում ասպարեզ իջած մեր մեծանուն հերոսներից յուրաքանչյուրի անունը կապված է կա՛մ հայոց որևէ տարածաշրջանի, կա՛մ որևէ նշանավոր ճակատամարտի հետ: Մեկը Ավարայրի հերոսն է, մյուսը՝ Սյունիքի կամ Արցախի, մեկը Սասունի հերոսն է, մյուսը՝ Տարոնի: Սարդարապատն իր հերոսներն ունի, Վանը, Շատախը, Սեբաստիան, Շիրակը, Լոռին՝ իրենցը… Եվ միայն Անդրանիկի հաղթական շնչառությունն է տարածվում բովանդակ հայոց աշխարհի վրա: Անդրանիկը Սասունի ու Տարոնի հերոսն է, Անդրանիկը Վանի, Բիթլիսի ու Էրզրումի հերոսն է, հերոսն է Կարսի, Շիրակի, Լոռու, Տավուշի, Սյունիքի ու Նախիջևանի, Ղարաբաղի ու Ավարայրի… 1918 թ. հունիսին այս պատմական դաշտում՝ նույն Տղմուտ գետի ափին, Անդրանիկն իր հոգնաբեկ զինվորներով ջախջախեց թուրքական զորամիավորումները, շեշտակի գրոհով վերցրեց թուրքերի ձեռքին գտնվող Խոյ բերդաքաղաքը, այնուհետև դուրս եկավ քաղաքից և նետվեց իր վրա շտապող Ալի Իսհան փաշայի դիվիզիայի վրա: Ցավոք, Ջուլֆայի կամրջի վրա Զորավարի նշանակած կայազորը չկարողացավ կատարել նրա հրամանը, չկարողացավ արևմտահայ գաղթականների 35000-անոց բազմությանը պահել Ջուլֆայում: Իր բախտը Անդրանիկի հետ կապած և ամեն քայլափոխի նրան կուրորեն հետևող ժողովուրդը տապալեց կայազորը, հեղեղի պես լցվեց Ավարայրի դաշտ և թշնամու հրետակոծությունից խուճապի մատնված՝ խառնվեց կռվող կողմերին, ստեղծեց մի աներևակայելի մղձավանջ ու քաոս՝ տալով բազմաթիվ զոհեր: Զորավարից գերմարդկային ջանքեր պահանջվեցին ճեղքելու թվով տասնապատիկ ավելի թշնամու օղակը և ժողովրդին վերստին Ջուլֆա հասցնելու համար: Անդրանիկի վարած ճակատամարտերի ամենաճշմարտացի նկարագրություններից մեկի հեղինակը՝ զորավարի թիկնապահ և քարտուղար Վահան Թոթովենցը, այսպես է գնահատել այս խելահեղ ճակատամարտը. «Քրիստոսի 1918 թվականին Անդրանիկ միևնույն պատմական և մեր քաղաքական դեմքը պայծառացնող Ավարայրի դաշտին վրա մղեց իր և մեր ժողովուրդին ամենեն խոշոր հերոսամարտերեն մեկը:

---

[8] *«Զարթոնք» (Բեյրութ), 1. IX. 1977, Ծ. Ա ղ ա յ ա ն. Անդրանիկ, Երևան, 1994, էջ 635–636:*

Վարդան Մամիկոնյան ինկավ այդ դաշտին վրա, փրկելով իր ժողովուրդի իտեալը, իսկ Անդրանիկ ապրեցավ և հաղթեց, ապրեցավ և մղեց ուրիշ ճակատամարտներ և տեսավ Հայոց աշխարհի ազատության արշալույսը, որուն համար նա ըրած է խոշորագույնը»[9]*:*

Մեր ժողովրդի հոգեկերտվածքին խորթ է կուրորեն մեկին հետևելը, իր ճակատագիրը անվերապահորեն մեկին վստահելը: Միակ բացառությունը Անդրանիկն է, ում հետևից ոտքով ու սայլերով անցավ ամենօրյա մարտերով ու այլևայլ աղետներով հագեցած մի դժոխային ճանապարհ՝ Կարսից, Ալեքսանդրապոլից Ջալալօղլի – Դսեղ – Դիլիջան – Սևան, Մելիմի լեռնանցքով՝ Վայոց ձոր – Նախիջևան – Ջուլֆա, հետևեց նրան անգամ հայրենի սահմաններից անդին՝ դեպի Խոյ, այնուհետև վերադարձավ Ջուլֆա – Նախիջևան – - Զանգեզուր – Դարալագյազ – Երևան: Այս մասին ուշագրավ հուշագրություն է թողել ռուս զորական՝ սիբիրցի պորուչիկ Ալեքսեյ Կոլմակովը[10]*: Երանի Ալեքսեյ Կոլմակովը այս դեպքերից երեք տարի առաջ՝ 1915-ին էլ եղած լիներ մեր □աներկրորդ□*[11] *հերոսի կողքին և նույնպիսի պատկերավորությամբ նկարագրեր Կովկասյան տարածաշրջանում երբևէ տեղի ունեցած ամենավճռորոշ ճակատամարտերից մեկը՝ Դիլմանի ճակատամարտը: Ավարայրի դաշտից ոչ շատ հեռու՝ հյուսիսպարսկական Դիլման գյուղաքաղաքի մոտ 1915-ի ապրիլին ռուսական բանակը Անդրանիկի շնորհիվ ջախջախեց թուրքերին, ինչի արդյունքում ողջ Կովկասի քրիստոնյա բնակչությունը փրկվեց անխուսափելի սպանդից: Դիլմանում հաղթելու պարագայում Էնվերին այլևս ոչինչ չէր խանգարելու կյանքի կոչել թուրքերի վաղեմի երազանքը՝ պանթուրքական հրեշավոր ծրագիրը: Դիլմանից հետո թուրքական զորաբանակը ծրագրել էր հասնել Բաքու, այնտեղից՝ Թիֆլիս և Կովկասը կտրել Ռուսաստանից: Իրադարձությունների նման զարգացման պարագայում դժվար չէ կռահել, թե ինչ էր սպաս-*

---

[9] *Արսեն Մարմարյան (Վ. Թոթովենց). Զոր Անդրանիկ և իր պատերազմները, Կ. Պոլիս, 1920, էջ 401:*

[10] *Այդ մասին մանրամասն տե՛ս Արսեն Մարմարյան (Վ. Թոթովենց). նշվ. աշխ., էջ 382,* В. А. Микаелян, А. А. Закарян. Поручик Колмаков о деятельности Андраника в 1918 г. – ‚Вестник общественных наукէ АН АрмССР, 1988, դ 8, с. 62–84; *Ս. Խանզադյան. Անդրանիկ, Երևան, 1989, Գ. Ղարիբջանյան. Ժողովրդական հերոս Անդրանիկ, Երևան, 1990, Հ. Սիմոնյան. Անդրանիկի ժամանակը, հ. 2, Երևան, 1996, Ա. Հ. Զաքարյան. Ռուս զինվորականները և սիբիրյան հայկական վաշտը.– □Հայկական բանակ□, 2003, -1, էջ 80–85, Поручик Алексей Колмаков.* Историческая армянская рота. Сост. и подготовил к изданию доктор филолог. наук Анушаван Закарян. Ереван, 2009; *Ռ. Սիմոնյան. Անդրանիկ. Սիբիրական վաշտի ողիսականը, Երևան, 2006:*

[11] *Անդրանիկին տրված «աներկրորդ» որակումը պատկանում է եղեռնամահ գրող Ռուբեն Զարդարյանի որդուն՝ արձակագիր Հրաչ Զարդարյանին. «Ա՛հ, է՞րբ, ո՞վ օր մը պիտի հաջողի այս* աներկրորդ, *այս հայ Աքիլլեսին կյանքը տալ, հույն հերոսեն այլապես իմաստուն, այլապես մեծ ռազմավար: Նորահայտ Սողոմոն, ռազմիկին, ռազմավարին, դատախազին, դատավորին, իշխանին բոլոր ստորոգելիները: Եվ այս բոլոր շքեղության վրա՝ ոչ մեկ բիծ: Ոչ մեկ դույզն ընկրկում կարելի է արձանագրել: Ան կմնա հայ ժողովուրդի պատմության մեծակառույց կոթողը, իբր խորհրդանիշ անոր հավերժական հպարտության» (տե՛ս Ա. Չելեպյան. Զորավար Անդրանիկ, Երևան, 1990, էջ 676–677):*

վելու նաև արևելահայությանն ու Վրաստանին: Ահա մինչև Միջին Ասիա ու Հեռավոր Արևելք ձգվող մեծ Թուրքիա ստեղծելու թուրքական զառանցանքը հօդս ցնդեցրեց մի Զորավար, որը երբեք բանակ չի ունեցել: Ահա թե ինչու էր ողջ թուրք ցեղը, շարքային ասկյարից, ենիչերիից, թալանչի բաշիբոզուկից մինչև տեսակ-տեսակ փաշաները, անեծքով ու զարհուրանքով տալիս Անդրանիկի անունը: Եվ ահա թե ինչու Անդրանիկի անունը մեկընդմիշտ ամրագրվեց ռուս պատմագրության հերոսական էջերում: Ամրագրվեց մեծարանքով ու հիացմունքով:

Ոչ մի հերոս՝ իրական թե երևակայական, համեմատելի չէ Անդրանիկի հետ: Իր հմայքով ու կատարելությամբ Անդրանիկին, թերևս, փոքր-ինչ մոտենում է միայն... Սասունցի Դավիթը: Այո՛, միայն էպոսը, առասպելը և այն էլ՝ փոքր-ինչ, քանի որ ժողովրդի կերտած այս իդեալ-հերոսն անգամ խոցելի է, նրան մեկ անգամ չէ, որ թշնամին խաբեց ու մոլորեցրեց, իսկ Անդրանիկին ոչ ոք չկարողացավ խաբել, ո՛չ թշնամին և ո՛չ էլ նախանձից ու քինախնդրությունից կուրացած «յուրայինը»: Ճիշտ է, «վերջիններս» դավեցին ու խարդավեցին, դառնացրին ու թունավորեցին նրա կյանքը, ի վերջո, գերեզման հասցրեցին, բայց խաբել ու մոլորեցնել՝ չկարողացան:

Հետաքրքիր է, որ ուրացումն ու դավերը տեղ էին գտնում նաև թուրքերի հետ ունեցած առերես բանակցություններում կամ նրանց ուղարկված հեռագիր-հաղորդագրություններում: Գուցե սա ինչ-որ տեղ բացատրելի է. օրհասական վիճակի մեջ հայտնված նորանկախ Հայաստանի Հանրապետության պատասխանատուները փորձում էին ամեն կերպ սիրաշահել անողորմ թշնամուն՝ քաջ գիտակցելով, որ թուրքի գլխավոր մտահոգությունը Անդրանիկի ինքնիշխան ներկայությունն է տարածաշրջանում: Բայց արի ու տես, որ դրանով նրանք ոչ թե շահում էին թուրքի բարեհաճությունը, այլ ավելի էին սաստկացնում իրենց հանդեպ թշնամու արհամարհանքը: Ինչպես, օրինակ, նույն 1918-ին, Թիֆլիսում, օսմանյան զորահրամանատարներ Վեհիբ, Խալիլ և Նուրի փաշաների հետ մի հանդիպման ժամանակ: Երբ Վրաստանում ՀՀ դեսպան Արշակ Զամալյանը փորձում է վերստին հավաստիացնել թուրքերին, թե Անդրանիկն օրենքից դուրս է հայտարարված, թե իրենք չեն ճանաչում նրան և ամեն ինչ պետք է անեն՝ պայմանագրով Հայաստանի մաս չկազմող Զանգեզուրից նրան հեռացնելու համար, Խալիլ փաշան այսպիսի խոսքեր է շպրտում նրա երեսին. «Մենք ալ մի վայրկյան ենթադրենք, թե դուք անոր ըրած գործերը չեք գիտեր և անոր հետ կապ չունիք, բայց գեներալ Անդրանիկ ինք շատ լավ գիտե թե ինք ի՞նչ կրնե...

Հաճախ կմտածեմ և ինքնիրենս կսեմ թե այս մարդը երեսուն տարի է, որ մեր դեմ կկռվի, արդյոք չի ձանձրացա՞վ, չի հոգնեցա՞վ կամ չի ծերացա՞վ: Դուք ինչ կուզեք այն ըսեք կամ ջանք թափեցեք հավատացնել մեզ, կամ ուրանալ զայն և իր գործերը, մենք կճանչնանք և գիտենք թե ո՞վ է ան: Կցավիմ, որ Հայ ծներ է»[12]:

Ի դեպ, սրանք այն փաշաներից են, որոնք տարբեր ճակատներում ջարդ էին կերել Անդրանիկից:

---

[12] *Զորավար Անդրանիկի Կովկասյան ճակատի պատմական օրագրությունը (օրագրված Զորավարին թիկնապահ զինվորեն), Բոստոն, 1924, էջ 147:*

Դժվար է ասել՝ եթե Անդրանիկն ապրած ու գործած լիներ 1000 կամ 2000 տարի առաջ, արդյո՞ք մեր ժողովուրդը կարիք կունենար Սասունցի Դավիթ ստեղծելու: Համենայն դեպս, Հրանտ Մաթևոսյանի հանճարեղ դիտարկումը մտորելու տեղիք է տալիս. «Զորավար Անդրանիկը, Անդրանիկ Օզանյանը մեզ համար նույնքան առասպելական է, դյուցազներգային, վիպերգային, ինչքան Դավիթը՝ իրական. համաժողովրդական սիրո հրապարակը այդ երկու իրական և վիպերգային հերոսների երթն է դարձնում պսակյալ շքերթ, մարդու և զինվորի իր իդեալով իր Անդրանիկին է հանդերձավորում, և իր Անդրանիկը՝ ժողովրդի Անդրանիկը, իդեալ մարդու կերպարը իր վրա է առնում ճիշտ և ճիշտ այնպես, ինչպես Դավիթ Սասունցին Մհեր Սասունցու զենքուզրահն է իր վրա առնում»[13]:

Նշենք նաև, որ Զորավարի գործի ու հիշատակի հանդեպ խարդավանքն այսօր էլ շարունակվում է՝ մոլորության մեջ գցելով պատմությանն անհաղորդ նոր սերնդին և մեզ ավելի հեռացնելով մեր մեծագույն հերոսից:

Անցյալ դարի 60–70-ական թվականների հայաստանյան սերունդը գիտեր, որ խորհրդային պատմագրությունը մի հաստաբեստ տապանաքար է՝ դրված իրական պատմության, պատմական եղելության ու իսկության վրա: Գոնե Պարույր Սևակն այդպես էր մտածում. «Իմ սերունդը Անդրանիկի մասին շատ քիչ բան գիտի, չասելու համար՝ համարյա բան չգիտի: Սրա համար կարելի է ամոթից գետինը մտնել, որովհետև Անդրանիկի մասին բան չիմանալը հավասար է իր ժողովրդի նորագույն պատմությանը անգետ լինելուն: Բայց ամոթից գետինը պիտի մտնենք ոչ թե մենք, որ մի ամբողջ սերունդ ենք, այլ նրանք, որոնց վզին է ընկնում մեր այս անգիտության բացատրելի, բայց անքավելի մեղքը...»[14]:

Եվ 90-ականներին, երբ սահմանները բացվեցին, և Հայաստանը հեղեղվեց սփյուռքահայ պատմագրական-հուշագրական տասնյակ ու տասնյակ մեծ և փոքր հատորներով, մենք այդ ամենն ընդունեցինք որպես կենարար թթվածին, որպես բացարձակ ճշմարտություն ու մնացինք այդ «ճշմարտության» տակ: Շատ քչերը գլխի ընկան, որ այդ ամենը մեծավ մասամբ պատվիրված կեղծիք է, հետևողականորեն կազմակերպված խարդավանք: Քչերը գլխի ընկան, որ չիմացությանը փոխարինելու է եկել թյուրիմացությունը: *Բայց լսենք ժամանակի առավել բարեխիղճ գործիչներից Գարեգին Նժդեհին. «Այսպես կոչված հայասեր քարոզչության համար Դաշնակցությունը ոչինչ չի արել: Ժամանակ չուներ: Նա զբաղված էր Անդրանիկին սևացնելու անշնորհակալ գործով: Անդրանիկին վարկաբեկելու համար Դաշնակցության պատվերով հրատարակվեց նրա դեմ ուղղված մոտ 1000 էջանոց երկհատոր աշխատություն: Սեպուհի՝ ամբողջությամբ Անդրանիկին նվիրված հուշագրությունն Ազգային Հերոսին իր փառքի բարձունքից տապալելու դատապարտելի փորձ է: ... Բոլոր ջանքերը ներդրվեցին՝ Անդրանիկին «զարդարելու» քաջնազարյան (դոնքիշոտյան) որակումներով՝ չգիտակցելով, որ դրանով իրականում ծիծաղում են Հայ Ազատագրական Շարժման վրա, քանզի ժողովուրդն Անդրանիկին համարում է Հայ Ազատագրական պայքարի խորհրդանիշ: Անկում են ապրում*

---

[13] *Հ. Մ ա թ և ո ս յ ա ն. Սպիտակ թղթի առջև, Երևան, 2004, էջ 332:*

[14] *Ա. Չ ե լ ե պ յ ա ն. նշվ. աշխ., էջ 663:*

բոլոր այն ժողովուրդներն ու կուսակցությունները, որոնք թեթևամտորեն են վերաբերվում սեփական հերոսականությանն ու հերոսներին: Այդ հոգևոր վայրագությունը մեր երիտասարդ սերնդի վրա թողեց առավել քայքայիչ ազդեցություն»[15]:

Նժդեհի՝ այս տողերը գրելուց անցել է 70 տարի: Նրա նշած 1000 էջը այդ ընթացքում դարձել է 10000, 100000 և դեռ շարունակում է ավելանալ: Դիպվածով կուսակցապետ, վարչապետ ու նախարար դարձած, երկիր ու ժողովուրդ տանուլ տված գրող-գրագետ-վարժապետներն այս կերպ իրենց մեղքերն էին բարդում Զորավարի հաղթ ուսերին, և նրանց մոգոնած կեղծիքը ավանդաբար «սկզբնաղբյուր» է ծառայում ժամանակաշրջանն ուսումնասիրողների համար՝ ծնունդ տալով նոր զեղծարարությունների: Ընդ որում, Մեպուհի՝ վերը նշված երկհատոր խեղկատակությունը[16] չարյաց փոքրագույնն է: Այս փառասեր զորականը հեռու էր գրական-վերլուծական շնորհներից և իր երբեմնի հրամանատարի հասցեին ուղղված նրա անհոդաբաշխ լուտանքները միայն խղճահարություն են առաջացնում հեղինակի հանդեպ: Առավել խորամանկ է վարվել քաղաքական հարաբերություններում թրծված ու բազում շնորհներով օժտված Ռուբեն Տեր-Մինասյանը: Հայդուկական շարժումներից մինչև Առաջին Հանրապետության ստեղծումն ընդգրկող ժամանակաշրջանի մասին նա ամբողջ յոթ հատոր ուշագրավ աշխատություն գրեց[17], որի էջերում Անդրանիկն ընդամենը մի քանի անգամ է հիշատակվում և այն էլ՝ խիստ հպանցիկ: Այսինքն, ներկայացնում է հայ ազատագրական պայքարի ողջ ուղին, որտեղ ամեն ինչ կա, բացի այդ պայքարի ողնաշարից: Սա ոչ թե միտումնավոր, այլ հրեշավոր «բացթողում» է: Այսպիսիներին է վերաբերում Բեյրութի «Շիրակ» ամսագրի խմբագրապետ Օննիկ Սարգիսյանի մի թափանցիկ դիտարկումը. «Հայ կամավորության, հայ պայքարին ու դատին նվիրված որևէ երկ անարգանքի պիտի արժանանա, եթե իր էջերեն բացակային Անդրանիկի կյանքն ու գործը, եթե անոր ընդմեջեն չճառագայթե Սասնո Արծիվին խրոխտ այլ պայծառ դեմքը, որ «անկարելիի ապառաժներուն դեմ ընդվզումին համառ ու ամեհի կոծումը նշանակեց»»[18]:

---

[15] *Գարեգին Նժդեհ, Երևան, 2011, էջ 286: Հանուն ճշմարտության պետք է նկատել, որ Նժդեհը ևս զերծ չի մնացել Անդրանիկի ուղղությամբ քար նետելու գայթակղությունից: Երբ նա փորձեց ինքնուրույն լինել, մասնավորապես, երբ Սփյուռքում սկսեց քարոզել իր □Յեղակրոն□ վարդապետությունը և անխնա հալածանքների ենթարկվեց իր կուսակիցների կողմից, այնժամ զգաց, որ հայ իրականության մեջ ինքնուրույն և ինքնիշխան կարող էր լինել միայն Անդրանիկը: Եվ մինչև 1920 թ. իր կողմից սիրված և մեծարված կուսակցապետերն ու կուսակցական ընկերները (Ս. Վրացյան, Ռ. Տեր-Մինասյան, Դրո և այլն) նրա հետագա նամակներում ու այլ գրություններում մեկեն որակվեցին* ավազակ, թշվառական, ընկերադավ, մորթապաշտ, հրեշ, փարիզաբնակ չարիք, փարիզաբնակ սրիկա, փարիզի դավադիր *(Ռ. Տեր-Մինասյանն ապաստանել էր Փարիզում),* հրեից փեսաներ *(Ս. Վրացյանի և Ռ. Տեր-Մինասյանի կանայք հրեուհիներ էին) և այլն (տե՛ս նույն տեղում, էջ 122–147):*

[16] *Ս է պ ո ւ հ. էջեր իմ հուշերեն, Բոստոն, հ. Ա, 1925, հ. Բ, 1929:*

[17] *Ռ ո ւ բ է ն. Հայ հեղափոխականի մը հիշատակները, 7 հատորով, Երևան, 1990:*

[18] *«Զարթոնք», 1. IX. 1977:*

Զորավարին ամեն գնով նսեմացնելու խոտոր ճիգերը սովորաբար գնահատվում է որպես նրա համաժողովրդական փառքի հանդեպ անձնական կամ կուսակցական նախանձի դրսևորում: Սա, անշուշտ, ճիշտ է: Սակայն սա երևույթի միայն արտաքին կողմն է, արմատներն ու միտումը ավելի խորն են: Երկիրն հանձնած ու նախարարական աթոռներից զրկված գրող-գրագետ-վարժապետները Սփյուռքում իշխելու իրավունք ստանալու համար պիտի «մաքրվեին» իրենց մեղքերից: Ո՞ւմ վրա պիտի բարձեին այդքան մեղք: Ո՞վ - կարող էր կրել մի ողջ սերնդի մեղքը, եթե ոչ Անդրանիկը, որին ժողովուրդը վաղուց հոր իրավունքներով էր օժտել: Հայրերը միշտ էլ «մեղավոր» են: Եվ սկսեցին անխնա բարձել: Հետաքրքիր է, որ երբ նրանցից մեկը՝ Հովհ. Քաջազնունին հրապարակեց իր «ՀՀ Դաշնակցությունը անելիք չունի այլևս» գիրք-խոստովանանքը (Վիեննա, 1923), չուշացավ Անդրանիկի արձագանքը. «…«Անելիք Չունինք»-ի հայտարարությունդ նախարարի աթոռեդ պետք է կատարեիր, եթե լսելի չըլլար ձայնդ, հրաժարականիդ հետ մեկտեղ դուրս գալու էիր պատվավորապես: Երբ դուն այսօր զղջումե մը վերջ կզգուշանաս պատասխանատու որևէ գործե, հին ընկերներդ՝ շատ մը սխալներե վերջ, դեռ զղջում ու դարձ չունեցան… գեթ հանդարտ մնալու էին Հայասերներու ժողովներուն և Ազգ. Ընկերակցության մեջ իրենց քիթերը խոթելե և անպատվելե ամեն բան…

… Ինկան անոնք իրենց նախարարի խարխուլ աթոռներեն և գացին հասան հոն, ուր որ իրենց հարմար էր և վայել. վարժապետը՝ վարժապետի, բանաստեղծը՝ բանաստեղծի, բժիշկը բժիշկի աթոռին և դիրքին վրա»[19]:

Պատմությունը սիրում է անողոք կրկնություններ: Հայաստանի Երրորդ Հանրապետության ղեկին ևս նախապես հայտնվեցին գրող-գրագետ-վարժապետներ: Թե նրանք ինչպիսի թշվառության ու չքավորության հասցրին ժողովրդին, բոլորին է հայտնի: Մնում է մխիթարվել գոնե, որ նրանցից մեկն իր սրտում Անդրանիկ ուներ և տասնամյակների հեռվից ճշմարիտ մեծարանքով է գնահատել Զորավարի վերջին արշավանքի ազգափրկիչ առաքելությունը. «… հեռվում ձգվող լեռնաշղթաների վրա շաղվող հայացքիս դեմ հածում էր Զորավարի առաջնորդած գաղթականության խմբակային ուրվականը…

… Ի՜նչ հեղինակության տեր պիտի լիներ մարդը, որ կարողանար հետապնդող թշնամու վերահաս գնդակի տակ սովյալ ժողովրդին տանել այդ տանջանքի աղեղով, որի վրա են ընկնում Հայաստանի բոլոր լեռնանցքները, և ճակատ տար այս անգամ Խոյի կողմից ներխուժող թուրքին, ապա ևս մի ծանր նահանջով զորքն ու բազմապատկված ժողովրդին անցկացներ Զանգեզուրի լեռնաշղթան և Զանգեզուրը պահեր մեզ համար: Եվ ի՜նչ ապաբախտ պիտի լինի զորավարը, որ այդքան կաշկանդված լինի իրեն ապավինած ժողովրդի ապահովության հոգսով ու չկարողանա իրեն վայել թափով շուռ գա, իր ծանր ձեռքը բարձրացնի ատելի թշնամու վրա… Թուրք ավարառուի ամեն անգամ բերող բախտից էր, որ տասնութ թվականի մայիսից հետո զորավարի ձեռքերը կապված էին գաղթականության բախտով»[20]:

---

[19] *Զորավար Անդրանիկի Կովկասյան ճակատի պատմական օրագրությունը, էջ 194:*

[20] *Վ ա ն ո Ս ի ր ա դ ե ղ յ ա ն. Ծանր լույս, Երևան, 1987, էջ 173:*

Հերոսները ծնվում են ժամանակի պահանջով, այն պատմական իրավիճակի պահանջով, որում հայտնվում է տվյալ երկիրն ու ժողովուրդը: Մեզանում ևս այդպես է եղել, սակայն հերոսի ու հերոսականության մատուցումը հաճախ աններելիորեն խեղաթյուրվել է: Մեր հերոսներին հաճախ «ստեղծել» են պատմիչը, եկեղեցին, կուսակցությունը, պետությունը, ազգային անվտանգությունը… Սրանց հերթագայությունը բերում է հերոսների հերթագայություն: Սրանց հերթագայությունը հերոսների աստղաբույլից առանձնացնում է մեկ-երկուսին՝ «հարմարեցնելով» նրանց օրվա քաղաքական տարուբերումներին:

… Երեկ մեր հերոսը Արամ Մանուկյանն էր, առաջի օրը՝ Դրոն, դրանից առաջ՝ բոլշևիկ գործիչներն էին, ավելի վաղ՝ հերոս էինք ստեղծում պատմության ուրվականներից (Տիգրան, Վարդան…), հետո վիճարկում նրանց արածն ու չարածը:

Այսօրվա մեր հերոսը ավելի արժանավոր է՝ Գարեգին Նժդեհ: Վաղը, թերևս, կհիշենք մյուս նվիրյալ-արժանավորներին՝ Մախլուտոյին (Սմբատ Բորոյան), Սեբաստացի Մուրադին (Խրիմյան), Քեռուն (Արշակ Գավաֆյան)… Այս բոլորը մի-մի պղնձակուռ աստիճաններ են, որոնցով ոչ թե պիտի անվերջ շրջապտույտ գործենք ու խարխափենք, այլ երբևէ բարձրանանք վեր, դեպի գագաթը՝ դեպի Անդրանիկը:

АНДРАНИК: ЗНАКОМЫЙ И НЕЗНАКОМЫЙ ГЕРОЙ ГЕРОЕВ

КАРО ВАРДАНЯН

Р е з ю м е

Зоравар Андраник является величайшим армянским национальным героем. Если имя любого другого из наших героев связано с тем или иным значительным боевым сражением, или с каким-нибудь конкретным армянским территориальным пространством, то отблески побед Андраника прослеживаются по всей территории исторической Армении: от Сасуна-Тарона до Нахичевани, Сюника и Карабаха. Еще со времен фидаинов боевая изощренность, невообразимая смелость Андраника, а также его рыцарский образ стали темой народных песен, сказаний и бесед. Однако общенародная известность и слава отважного полководца не давали покоя партийно-политическим кругам, которые параллельно с легендами, сплетенными вокруг Зоравара, заложили основы лживой историографии, существующей по сей день, с одной лишь целью – бросить тень на славное имя народного героя.

ANDRANIK. KNOWN AND UNKNOWN HERO OF HEROES

KARO VARDANYAN

S u m m a r y

Zoravar Andranik is the greatest Armenian national hero. If the name of any other of our heroes is connected with a certain significant battle or any Armenian district, Andranik's victorious tracks are seen in the whole historical territory of Armenia – from Sasun-Taron to Nakhijevan, Syunik and Gharabagh. Since the times of fedayees Andranik's military resourcefulness , unimaginable courage and knighthood have become a theme for national songs and tales. His nationwide glory didn't give the party and political figures rest. They created a false historiography having for an object to cast a shadow on the glorious name of the national hero.